ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

<<Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքում լրացում կատարելու մասին>> **ՕՐԵՆՔԻ** ՆԱԽԱԳԾԻ Պ-**085**-03.04.2019-ԱՍ-011/0

ՆԱԽՆԱԿԱՆ ՔՆՆԱՐԿՄԱՆ ՀԱՄԱՐ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԲԱՆԱՎՈՐ ***ԱՌԱՋԱՐԿՆԵՐԻ***

ԱՌԱՋԱՐԿԻ ՀԵՂԻՆԱԿԸ	ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԻԾԸ ԿԱՄ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ ՄԱՍԸ	ԱՌԱՋԱՐԿԸ	ԱՌԱՋԱՐԿՆ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ԿԱՄ ՄԵՐԺԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԵՂԻՆԱԿԻ ՎԵՐԱԲԵՐՄՈՒՆՔԸ	ԱՌԱՋԱՐԿՆ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ԿԱՄ ՄԵՐԺԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՈՐՈՇՈՒՄԸ
ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ	<<Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքում լրացում կատարելու մասին>> **ՕՐԵՆՔԻ** ՆԱԽԱԳԻԾ Պ-**085**-03.04.2019-ԱՍ-011/0	Նախագիծը լրամշակել նախատեսելով առաջարկվող լրացումը կատարել ավելացնելով նոր 3.1-րդ հոդված *«3.1. **Խտրականության արգելումը*** *1. Խտրականություն է համարվում սեռի, ռասայի, մաշկի գույնի, էթնիկ կամ սոցիալական ծագման, գենետիկական հատկանիշների, լեզվի, կրոնի, աշխարհայացքի, քաղաքական կամ այլ հայացքների, ազգային փոքրամասնությանը պատկանելության, գույքային վիճակի, ծնունդի, հաշմանդամության, տարիքի կամ անձնական կամ սոցիալական բնույթի այլ հանգամանքների պատճառով ցանկացած ուղղակի կամ անուղղակի տարբերակում, բացառում կամ սահմանափակում, որի նպատակը կամ արդյունքը հանդիսանում է կոլեկտիվ և (կամ) անհատական աշխատանքային հարաբերությունների ծագման և (կամ) փոփոխման և (կամ) դադարման դեպքերում նվազ բարենպաստ վերաբերմունքի դրսևորումը կամ մյուսների հետ հավասար հիմունքներով աշխատանքային օրենսդրությամբ սահմանված ցանկացած իրավունքի ճանաչման և (կամ) իրականացման արգելքը կամ ժխտումը, բացառությամբ այն դեպքերի, երբ այդպիսի տարբերակումը, բացառումը կամ սահմանափակումն օբյեկտիվորեն արդարացված են հետապնդվող իրավաչափ նպատակով և այդ նպատակին հասնելու համար կիրառվող միջոցները համաչափ են ու անհրաժեշտ:* *2. Աշխատանքային օրենսդրությամբ խտրականությունն արգելվում է:»:*	ԸՆԴՈՒՆԵՑ	ԸՆԴՈՒՆՎԵՑ